



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԱՅՈՒՄ ԱՌԵՐԸ

Թ. ՏԱՐԻ 1925

Ժարեկամ 1 ստեղնին:

ԹԻՒ 5-6
ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԱՆՁԱՆՈԹ ԷԶԵՐ ՄԱՅՈՑԻ ԵՐ ՆՐԱ
ԱՅԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԵՍՆՔԻՑ ԼՈՏ ՕՏՈՐ
ԱՂԲԻՒՐՆԵՐԻ

այ գրի եւ գրականութեան հիմնադիրների
կեանքը ծանօթ չէ այն չափով, որքան
արժանի էին նրանք յ/շողութեան իրենց
մեծ գործով: Լոիւ չեն տեղեկութիւնները մա-
սաւանդ այն նշանաւոր մարդու մասին, որ առա-
ջնն է զգացել սեփական գիր ունենալու պա-
հանջը եւ հիմը ձգել ազգային դպրութեան:

Զարմանալին այն չէ, որ յետինները չե-
տին — ժամանակի իրամատուի անջատուած —
սկանչելի գիւտի եւնրա մեծ վաստակաւորի պատ-
մութիւնը: Կոյն իսկ ժամանակակից կորիւնը չի
կարող պարծենալ առանձին գիտութեամբ:
Թէեւ Մաշթոցի ձեռնասուն աշակերտը եւ նրա
կենսագիրը, նա գրերի մասին շատ բան չգիտէ,
գոնէ շատ բան չի պատմում: Նորա հետա-
քրքրում է կարծես ոչ այնքան գիւտը, որքան
Մաշթոցի քարոզութիւնը եւ այն էլ Հայաստանի
ծայլագաւառներում եւ Աղուանից եւ Վրաց
աշխարհներում: Այս հանգամանքը ընդունակ
է իրաւամբ կասկածներ յարուցանել: Սակայն
մեր նպատակը չէ կորիւնի գործը քննել:

Յայն եւ լատին հին յիշատակարաններում
կան քանի մի ակնարկներ եւ տեղեկութիւններ,
որոնք, որքան եւ դիպուածական եւ հատուկտոր,
բայց եւ այնպէս անսպասելի լոյս են ցօղում
Մաշթոցի եւ իւրայինների կեանքի մի կարեւոր
շերտի վերայ: Գուցէ եւ նրանք թոյլ տան
բարձրացնելու այն քողը, որ թւում է թէ
ձգած է կորիւնի երկի մէջ ոչ միայն Մաշթոցի
այլ եւ իր կորիւնի որոշ գործունէութեան
վերայ:

Յայն եկեղեցու պարծաճը Փոտ պա-
տրիարքը, յայտնի է, քաղաքակիրթ աշխարհի
առաջ մեծ երախտիք ունի շնորհիւ իր հոչա-
կաւոր «Գրադարանի»: Նրա փառքին մասնա-
կից ենք, ի գեպ է ասել, հայերս, քանի որ
կից ենք, ի գեպ է ասել, հայերս, քանի որ
Փոտի երակների մէջ վազում էր առատօրէն
հայի արիւն, որովհետեւ Արշաւիր պատրիկի
քեռորդին էր: Ընթերցասէր պատրիարքը կազմել
էր հին հեղինակների ճոխ ժողովածու, որի շնոր-
հիւ նորա տունը կիրթ հասարակութեան կեն-
դրոն էր: Կա սովորութիւն ունէր կարդացած
գրքերի մասին հաշեւ գրել, նշանակելով նրանց
բովանդակութիւնը երբեմն համառօտ, յաճախ
մանրանասն: Այս կերպով կազմուել է նրա
«Գրադարան» աշխատութիւնը, որն ամիսիում
է մօտ 300 հեղինակութիւններ: Կան գործեր,
որ կորել են, գոնէ մինչեւ այժմ չեն յայտ-
նուել եւ նրանց թիւը քիչ չէ եւ շատերի մա-
սին գաղափար ունենք միմայն լուսամիտ պատ-
րիարքի աշխատութեան շնորհիւ:

Ահա այդ գրսդարանու մի է, որ Փոսը
յիշում է թէ-դոր Մոպսուեստացու կամ Մա-
մուեստացու, ինչու էս մերոնք էին ասում, մի
գործը հետեւեալ խօսքերով, որ լերում ենք
ու մբողջապէս, բնագրի հետ տալվ եւ բառացի
թարգմանութիւնը:

Bib. Photii. 81 (P. G. 103, col. 281).

Θεοδώρου πρεσβυτέρου

Թէոդոր Երէցի

περὶ τῆς ἐν Περσίδι μα-
γικῆς ἐν λόγοις γ'. Ἀγε-
γρώσθη βιβλιδάριον Θεοδώ-
ρου περὶ τῆς ἐν Περσίδι μα-
γικῆς καὶ τίς ἡ τῆς διὰ
εὐσεβείας διαφορὰ ἐν λόγοις
τούσι.

*Προσφωνεῖ δὲ αὐτὸν πρὸς
Μαστούβιον ἐξ Ἀρμενίας
δομῷμενον, χωρεπίσκοπον
δὲ τυγχάνοντα.*

Καὶ ἐν μὲν τῷ πρώτῳ
λόγῳ προστίθεται τὸ μισθὸν
Περισσῶν δόγμα, δὲ Ζαράδης
εἰσηγήσατο, ἵτοι περὶ τοῦ
Ζουρούνα, οὐ ἀρχηγὸν πάτρ-
των εἰσάγει, οὐ καὶ Τύχην
καλεῖ καὶ δι τοι ποτέδων, ἵνα
τέκῃ, τὸν Ὀρμίζδαν, ἔτεκεν
ἐκεῖνον καὶ τὸν Σατανᾶν
καὶ περὶ αὐτῶν αἱμομιξίας.

*Kai ἀπλῶς τὸ δυσσεβὲς
καὶ ὑπέρδαισκον δόγμα κα-
τὰ λέξιν ἐκθεῖς ἀνασκευάζει
ἐν τῷ ποώτῳ λόγῳ*

Ἐρ δὲ τοῖς λοιποῖς δυσὶ^{τόντης}
λόγοις τὰ περὶ τῆς εὐσεβῶς
διέρχεται πίστεως, ἀπὸ τῆς
κοσμητικῆς ἀρχῆς, καὶ
περὶ αὐτῆς τῆς κάριτος
δομῶντος καὶ ἐπιτροχάδην
διειλθόντων.

Οὐτος δ Θεόδωρος δ
Μοφουεστίας εἶναι δοκεῖ
τὴν δὲ γὰρ Νεστορίου αἵρεσιν
καὶ μάλιστα ἐν τῷ τρίφ-
λογῳ κρατήντων προαναφω-
νεῖ, ἀλλὰ καὶ τὴν τῶν ἀμαρ-
τωλῶν ἀπόκατάστασιν τερα-
τεύεται.

Յաղագս որ ի Պարս
մոգութեան, ի Ճառս երիս
Կարդացել եմ թէ ոտք, Ե
զիքը յաղագս որ ի Պարս
մոգութեան եւ զինչ որ
ի բարեպաշտ հաւատոց զա-
նազանութիւն <ուրա>
յլ որիս Ճառս:

Ու զղուած են նրանք առ
Մատուբիոս ծագումով
Հայաստանից եւ ինքն քոր-
եալ սկզբունք:

Առաջին ճառում խօսում է պարսից պիգակը կրօնի մասին, որ մուծելու համար այն է քրուանի մասին, որին սմէն բան սկզբնապատճռում է դնուած եւ որին անուաննում է նաեւ բախտ: Եւ թէ ինչ պէս յաշու եր անում, որ ծնի Որդիկին, ծնում է եւ սատանային: Եւ նրանց առնեսատիւ մէ եան մասուն:

Մի խօսքով ամբարիշը
եւ գարշելի կրօնը մէջ ըե-
րեավով հերքում է առաջին
ծառութեաւ

Եսկ մնացիւալ երկու ճառ
ու երս մ խօսում է բարե-
պաշտ հաւատի և ութեա-
մասին, սկսելով աշխարհ-
աբարզութիւնից, եւ նմա-
նապէս խօսում է անցո-
ռակի նաեւ ներհչի մարին

Այս թէոգորը թւում
որ Առաքուեատուցին է
որ վշեաւե Կեստորի աղան-
դի մասին մանաւանդ է բրուց
ճառում՝ հաստատապէ
նս խաքարող է հանդիսա-
նում, այլեւ մեզաւորներ
վերականգման (արդարաց
ման) մասին է բանդակու-
չում:

ինքնեան, այլ եւ նորա հասցէն։ Բովանդակութեանը կը դառնանք ուրիշ առթիւ մի այլ յօր դուածում։ ոյժմ կանգ առնենք երկրորդ կտիւ զբութեան հասցէի վերայ։

Արդ յան պատրիարքը վկայում է, որ
Թէոդորի գիրքը գրուած է եղել մի հայ քոր-
եպիսկոպոսի համար եւ քարերախտաբար չի մո-
ռացել նշանակել նրա անունը: Արդեօք ով է
այդ հայ և կեղեցականը, որի անունը հնչում է
Mastoubios: Յշենք, որ Թէոդոր Մամուհստա-
ցին մեռել է 428 թուին եւ եպիսկոպոս էր
սկսուած 392 թ. մերձաւորապէս: Հայ դպրու-
թեան ծանօթ անձը բնաւ չի վարանիր Մաստու-
բիօսին նշանայնելու Մաշթոցի, Թէոդորի ժա-
մանակակից հայ իրսկանութեան ամենացայտուն
զէմքի հետ: Հետեւասկէս Մաստոնթիօս ուղղե-
լու է Մաստոնչիօս կամ Մաստոնչիօս: Անանուն
յոյնի խածօւու տῆς Մեցայիշ՝ Արմենիաց յօ-
դուածում Մաշթոցի անունը հնչում է Մաս-
տիչի և Մատիշ(v)թէշ (P. G. 132):

Յու շի ունենալով հսյ գրականութեան
հօր կրկնակի անունը թերեւս ոմանք գայթակ-
ղուին կալ դալու Խարօնթուս, այսինքն Մաւրոր՝
Սակայն, որքան հաւասարի է Մաշթոց անունը,
նշյուքան երկրայիլի է Մաւրոր, աւելի Ճիշդ
Մեսլ ոպ: Հին մատենագիրները, Կորիւն եւ Ղա-
զար, գիտեն միայն Մաշթոց անունը. մինչդեռ
Խորենացին է առաջինը, որ Մաշթոցի տ' զ որ ծ
է ածում Մեսլոպ: Ի՞նչ հիմ ունէր մեր պատ-
մահայր. անյայտ է. մինչեւ ինդրի պարզ! լը
գերս դասելի է, անպայման, Մաշթոցը:

Նկատենք, որ թուղթ Պրոկլիայ եպիսկոպոսի ունի Մամդղոց ընթերցումը, որը Կարծես ա Ելի հին և սոսոյց ձեւն է եւ Կարող է թե- լադեւել բառի ստուգ արանական ծագումը: Աթէ ընդունենք, որ Մամդղոցի Նախնական հնչիւնը Մա զդ ոց է, ինչ որ անհաւանական չէ, իբա- ւամբ կ' ը զ ենք նշնացնել իւ անական մազդակ անուան հետ, հայ -ոց փաղաքշական, երեսի մասն կի յաւելումով¹:

1. *Մաժդղը Տետագպյում փոխում է Մաշդղին*
ինչպէս Գրութի պատասխանում. Գիրք թղթոց, էջ 9.
Երբահամ կոմժողիկոսի թուղթ առ կիրիոն, անդ 180°
օձնեցու սակա ժողովոց, անդ 220, գագիկի թուղթ առ
Ռոմանոս կայոր, անդ 296.

Սայն անոնքը կրում է եւ, Կաբրուէս կամ ռզիկոսի ժամանակից հայ եպիսկոպոսներից մինչև՝ Մաշտաց Խորխոսուն Նեալու եպոս, անդ, 70, 73 եւ այլն:

Մաշտաց, գառնում է Մալթոց, դը թ. շի աղդյուր
թեամբ ող մասնիւթ ձանօթ է եւ պյուստ, ինչպէ
Տիրոց, մարտոց։ Մալթոցի ինտամութիւնը Mazdakի հետ
աւելի քան Հաւան ական է։ Մաշտոց եւ Մաժդաց եւ
Մազդաց էն, երի միջնորդութեամբ։

Մաստուրիսի քորեպիսկոպոս կոչումը չպէտք է շփոթեցնէ մեղ։ թէ Մաշթօցը իրօք ինչ աստիճան ունէր, յայտնի չէ։ գուցէ իսկապէս քորեպիսկոպոս էր։ Այսպէս էին կոչում այն եպիսկոպոսները, որ օրինական աթոռ չունէին եւ աթոռակալ եպիսկոպոսի օգնական կամ փոխանորդ էին։ բառի կողմը, ինչպէս եւ հասկանելք էպիսխոռուս տից չջրահ, թէ օ էն չարգ էպիսխոռուս ան, իմաստը մում է գրեթէ նոյնը եւ պատշաճաւոր Մաշթօցի շրջկ գործունեութեան¹, Կորիւնը չէ յիշում իր ուսուցչ աստիճանը, իսկ ակումիտ տիտղոսը՝ ստացած Կ. Պոլսում, ձառնակից, միայն նոր կասկածների առիթ կարող է տալ։

Եթէ Ճիշդ է մեր նոյնացումը, առաջին անգամն է, որ երեւան է գալիս Հայ լուսաւորութեան հօր անունը ընդհանուր գրականութեան մէջ։

Հնչական յարակցութիւնը չէ միայն, որ մեղ պատրում է։ Կան եւ պատմական լուրջ հիմքեր, որ գալիս են հաստատելու մեր ենթադրիւնը։

Թէոդորի եւ Մաշթօցի ժամանակակից ամենախոշօր երեւոյթը ընդհանուր եկեղեցական կեանքում Եփեսոսի ժողովն է։ Մամուեստի եպիսկոպոսը թէեւ թօղել էր այս աշխարհը ժողովից երեք տարի առաջ, բայց իր անուան կշնորի եւ մտաւոր ժառանգութեամբ կենդանի մասնակից էր գալց վէճերի երկար ժամանակ։

Եփեսոսի ժողովի շուրջը ծագած յուզում ները արձագանք գտան եւ Հայաստանում։ Պայքարող կումերը առանձին արժէք էին տալիս հայերի բռնելիք դիբբին եւ աշխատում էին զրաւել նրանց համակրութիւնը։ Ըստհանուր իրարանցումի ժամանակ կար վայրկեան, երբ հայերը կարծես թէ հանրական ուշադրութեան կենդրունն էին։ Ազգային յիշողութիւնը է միայն խուլ շշունչն եղելու թեանց, որոնց մասին որոշակի ճառում են օտար աղքիւները։

431 Եփեսոսի ժողովը փակից իր նիստերը տում վ եւ աքսորով։ 2ի կարելի ասել, սակայն, որ սուրբ հայերի հաւաքան որոշումը սանձահարեց կրքերը եւ նրանք վերադառն իրենց տեղերը խաղաղութեան ձիթենիով։ Տարիներ էին պէտք, մինչեւ որ բորբոքուած սաղեղները հովանային ընդհանուր խաղաղութեան տեսչով։

Կոռուող ուղղութեանց պարագլուխները՝ Կիւրեղ Աղեքսանդրացին եւ Յովհաննէս Անտիոքացին մէծ Ճիգերից յետոյ համոզուեցին. Հաշտութեան գալ փոխադարձ զիջումների գնով։ Հաշտութիւնը կայացաւ 433 թուին մարտ ամսին։ Եւ այս կարեւոր դէպրը զըսպեց յուզումները։ Անհաշտ տարրերը շարունակեցին հակառակութիւնները, կազմելով երկու կողմերի ծայրայեղ թեւերը։ Իրանց ոգին էր կիւրեղեանների բանակում Մելետինի եպիսկոպոս Ակակը եւ Եղեսիայի եպիսկոպոս Ռաբուլ։ Անտիոքեանների իմբում յամառողներն էին Կիլիկիայի եպիսկոպոսները, որնք ժողով գումարեցին Անաւարդում եւ բողբեցին կայացած միութեան դէմ¹. Ակակն եւ Ռաբուլը եւս, իրը հաւատարիմ կիւրեղականները, վրդովուած էին, որ իրենց պետք զիջանելով մատնել է Ճշմարտութեան դատը². Նեստորի անկումով հալածելի են յայտարարում ոչ միայն նրա անձը, այլև դրուածները։ Հակառակորդները սկսում են տարածել յետոդոր Տարսոսցու եւ Թէոդոր Մամուեստի գրութիւնը թիւները։ Սրանք էին բանադրուած վարդապետութեան բուն հեղինակները։ Նետորի հետեւ օրդների համար սա միեւնցն ժամանակու օրդների միջոց էր ցոյց տալու, որ ժամանակ մի կողմանակի միջոց էր ցոյց տալու, որ անարդարութիւն էր գործուած իրենց ուսուցչի դէմ, քանի որ նա այլ բան չէ քարոզել, քանի որ դաւանել են յիշեալ հայրերը։

Երեւում է, որ Թէոդորը առանձին հռչակ էր վայելում հայերի մօտ. այս առթիւ է, որ թշնամանով կողմերը հարկաւոր են համարում դիմել հայերին։ Ակակ եւ Ռաբուլ զգուշացնում են, որ Թէոդորի գրուածները խորշելի են եւ աղանդաւոր, իսկ Կիլիկիայի եպիսկոպոսները յայտարարում են, որ Ռաբուլ անձնական ոխութիւնում դէմ։

Այս հակասական քայլերը դժուար կացութիւն են ստեղծում հայերի համար։ Հայ եպիսկոպոսները ժողով են գումարում եւ Ճշմարտութիւնը պարզելու նպատակով որոշում են դիմել Կ. Պոլսի պատրիարքին։ Երկու երեց, Ղեւոնդիոս եւ Արերիսու յանձնարարական նամակով մէկնում են Պրոկլի մօտ։ Նրանք տանում են իրենց հետ նաև Թէոդորի գրուածներից քաղուած վատրները։ Հայերն ուզում են պատրիարքի կարծիքը, թէ ով է արդար, Ակակն ու Ռաբուլը թէ կիլիկիցիք։

¹ Mansi, V 891.

² Անդ V. 860 եւ 998 Ակակի նամակը Կիւրեղին կրկնաւութիւնների թարգմանութեամբ։

¹ Յայտնի է Ղազար Փարակցու գանդառը, որ նրան ներ քորպիսկոպոս որ չարարու թող թէ աձկացուցան ու ակացի ամսութիւնն թուղթ Ղազարաց, էջ 587։

Պրոկլն ընդունելով հայդեսպանութիւնը, քննում է ուշադրութեամբ Նրանց թղթերը եւ պատրաստում պատասխան։ Միեւնոյն ժամանակ հարկաւոր է նկատում դիմել Աղեքսանդրիայի եւ Անտիոքի պատրիարքներին եւ Խնդրում որ Նրանք եւս ստորագրեն հայերին զրկելիք պատասխանը։ Պրոկլի դիմումը յատուկ նամակով տանում է Անտիոք Թէոդոր անունով մի սարկաւագ։ Յովշաննէս պատրիարքն իր եպիսկոպոսների հաւանութեամբ ստորագրում է թուղթը։

Մի այլ սարկաւագ Վասիլ անունով նոյն յանձնարարականով ուղարկում է Աղեքսանդրիա եւ բերում է կիւրեղի պատասխանը։

Մինչ այն պատրիարքն արդէն զրկած է լինում իր գաւանաբանական թուղթը հայերին։ Ինչպէս երեւում է, Պրոկլը բաւականանալով Անտիոքի վերաբերումով աճապարում է հասցնել թուղթը հայերին, առանց սպասելու Կիւրեղի կարծիքն։ Բայց, անտարակոյս, զգուշութեան համար ձեռնպահ է մնում որեւէ ակնարկ անել Թէոդորի հասցէին։

Այս անցուդարձին վերաբերեալ վաւերագիրները, դժբախտաբար, կորած են մեծ մասով։ Մնացել են միմիայն Պրոկլի թուղթը հայերին յօյն, հայ եւ ասորի լեզուներով։ մնացել են նաեւ Ակակի թղթերը հայոց եւ Նրանց պատասխանները միմիայն հայերէն։

Լատին մատենագիր Լիբերատը, ինչպէս երեւում է, ունեցել է իր տրամադրութեան տակ կորած վաւերագիրներից շատերը եւ չի զլացել հակիրճ բայց բովանդակալից հաշիւ տալ իր երկի մէջ։ Ճնորհապարտ պիտի լինենք հեռաւոր կարթագէնի եկեղեցականին, որ անտես չի արել եւ հայոց հարցը։ Սարկաւագ Լիբերատը յիշեալ եկեղեցու կողմից մասնակցել է իր ժամանակուայ շատ ժողովների եւ ներկայ է եղել նաեւ տիեզերական Ե. Ժողովին 553 թ. Թէոդոր Մամուեստացու, ինչպէս եւ Թէոդորիտի եւ Իբասի Խնդիրը նոյն ժողովի քննութեան եւ ապա դատապարտութեան առարկայ եղաւ։ Երեք անձերը, կամ ինչպէս ասուում է եկեղեցական պատմութեան մէջ, երեք գլուխները, դատուում էին առ Նեստոր ունեցած յարաբերութեան տեսակէտից։ Բնականօրէն ժողովը աշքի պիտի անցնէր Նրանց վերաբերեալ գրութիւններն ու թղթերը Եփեսոսեան վէճերի ժամանակից։ Յետագյում Նրանցից շատերը կորստեան են մատնուել եւ մանաւանդ այն թղթերը, որ նայում էին հայերիս։ Լիբերատը օգտուել է Նրանցից եւ տեղ տուել իր երկի մէջ, որ ամփոփում է

եկեղեցական անցքերի պատմութիւնը 428—553 թ. վերեւ յիշեցինք, ինչ որ նա պատմում է հայոց մասին։ Պիտանի ենք համարում մէջ բերել եւ Նրա բուն խօսքերը բնագրով եւ թարգմանութեամբ։

Liberati diaconi Breviarium, P. L. 68, col. 963.

Nestorii sectatores... “Նեստորի աղանդակից-աiebant non sapuisse nova Nestorium, sed antiquorum patrum prosecutum fuisse doctrinam et in eotantum studii gesserunt, ut ipsa eorum volumina malitiose in Syrorum linguam et in Armenorum atque Persarum transferrent.

Sed haec ubi agnoverunt Acacius Melitenensis et Rabula Edessae civitatis episcopus... scripserunt Armeniae episcopis, ne Theodori Mopsuesteni libros susciperent tanquam haeretici et auctoris dogmatis Nestoriani, insimulantibus episcopis Ciliciae Rabulam et Acacium, quod hoc non ex charitate, sed ex emulatione atque contentione fecissent.

Congregati sunt ergo in unam venerabiles Armeniae episcopi et miserunt duos presbyteros Leontium et Aberium ad Proclum Constantinopolitanum episcopum, secundum morem, cum libellis suis, et uno volumine Theodori Mopsuesteni, scire volentes utrum doctrina Thodori an Rabulae et Acacii vera esse probaretur.

Itaque Proclus accipiens Armeniae episcoporum libellos et illud Theodori volumen, diligentius utraque examinans, tomum Armeniis scripsit et destinavit, in quo posuit, ad interimendas Nestorianorum versutias, qui duas in Christo inducunt personas, „unum de trinitate incarnatum“, „Այսպէս Պրոկլը ստանալով հայ եպիսկոպոսների թուղթը եւ Թէոդորի գրութեալը, ուշիւնով քննուեցած ել, եւ յետոց նամակ գրեց հայերին, որի մէջ ի ջնջումն նեստորականների որոնք ՝կերկու և քրիստոնութեան մանէնին անձինո՞յ գրութեալ է՝ “մին յերով գութենէ մարմացեալ”;

quem et direxit Joanni Antiocheno per Theodorum diaconum suum, continentem subter capitula ab haereticis prolata; expetens ab eo, pro communi fide servanda, ut cum suo concilio eum susciperet et subscriberet.

Joannes autem et qui cum eo erant congregati episcopi, legentes tomum et ejus laudantes compositionem, subscipserunt in eo et Proclo transmisserunt...

Sed Basilius quidam diaconus sumens tomum Procli quem Armenis scripserat, Alexandriam venit et Armenorum libellos suis libellis annexens, obtulit Cyrillo ejusdem urbi antistiti...

Itaque Basilius diaconus Constantinopolim veniens libellos composuit et archiepiscopo Proclo porrexit, associans cuncta quae ante hac Cyrillo archiepiscopo obtulerat.

Proclus vero iam destinaverat tomum suum Armenis, in quo tomo nullam facit de Theodoro reprehensionis mentionem.

Quod cognoscens Basilius scripsit libellum in quo docuit libros Theodori vitandos, sicut Arii et Eunomii blasphemias...

Post haec autem occasione accepta surrexerunt quidam monachi ab Armenia Apollinaris sectatores duo vel tres (sicut refert Joannes Antiochenus in epistola sua) portantes excerpta capitula, ut dicebant, delibris Theo-

պրոկլը նամակն ուղարկում է Յովհաննես Անտիոքացուն իր թէսուր՝ սարկաւագի ձեռքով, որը պարունակում էր նաև քաղուածներ հերթիկոսներից, եւ ինդրում է նորանից, որ յանուն Ընդհանուր հաւատի պահպանութեան նա իր եկեղեցու հետ պաշտպան կանգնի եւ ստորագրի:

Յովհաննես իր ժողովական եպիսկոպոսների հետ միասին կարդանով Պրոկլի նամակը հաւանեցին Նրաշարագրուածը, ստորագրեցին եւ դարձրին Պրոկլին:

Բայց մի վասիլ (Բարսեղ) սարկաւագ, գերժնեալ Պրոկլի նամակը, որ գրուած էր հայոց մեկնեց Ազգքամուրիա եւ հայոց թուղթն իր գրութեան հետ ներկայացրեց Կիւրեղին, նոյն քաղաքի առաջնորդին, Վասիլ սարկաւագը վերաբռնալով կաստանդնուպոլիս, Կոստանդնուպոլիս, մի թուղթ եւ յանձնեց Պրոկլ արքապիսկոպոսին, Կղելով նրան այս ամենը, ինչ որ Գրանից յառաջ ստացել էր Կիւրեղից:

Սակայն Պրոկլն արգէն զգել էր իր թուղթը հայերին, որի մէջ թէու գորի գերաբերեալ ոչ մի յանդիմանական յիշառակութիւն չէր արած:

Այս բանը իմանալով Վասիլը մի թուղթ գործ որով յորդուած էր նորութեալ թէու գորի գերաբերից այսպէս, որպէս Արիստի եւ Եւստի ամբարձութիւնից...:

Այսուհետեւ առթից օգտուելով ելան Հայաստանից քանի մի վանականներ, Ապունիարի հետեւորդ, երկու թէ երեք հոգի (ինչպէս հաղորդում է Յովհաննես Անտիոքիցին իր նամակում) եւ առնելով իրենց հետ քաղուածներ, ինչպէս

dori Mopsuesteni, vel aliorum sanctorum patrum, qui in illo tempore, sicut diximus, contra Apollinarem scripserant: et intrantes regiam civitatem et multorum soridantes auditum calliditate sua omnia perturbabant.

Deinde circumneuntes totius Orientis civitates et universa monasteria, damnanda esse cum auctoribus clamabant accusantes ea Nestoriam sensu fuisse conscripta: «quia si Nestorius juste damnatus est, damnentur et ista, dicebant, cum suis auctoribus».

Ապա շրջելով ամբողջ Արեւելքի քաղաքները եւ բոլոր մենաստանները պահանջում էին, որ դասապարտուէին այդ քաղուածները իրենց հեղինակների հետ միասին, յանդիմանելով, որ նրանք գրուած են Կաստորական սովորութեամբ իրենց նենդութեամբ խառնեցին ամէն ինչ:

Ապա շրջելով ամբողջ Արեւելքի քաղաքները եւ բոլոր մենաստանները պահանջում էին, որ դասապարտուէին այդ քաղուածներն իրենց հեղինակների հետ միասին, յանդիմանելով, որ նրանք գրուած են Կաստորական սովորութեամբ իրենց հեղինակներով,,»

Հիմք չկայ բնաւ կասկածելու լատին սարկաւագի Ճշմարտախօսութեանը ոչ մի կէտում, ոչ մի տողում: Ազգային աղբիւրները, որքան եւ պակասաւոր, հաստատուն կուռաւ են տալիս ստուգելու եւ լուսաբանելու օտարի տեղեկութիւնները:

Մելիսանի եպ. Ակակին իր թղթում գրում է՝ «զահի հարեալ թէ գուցէ եւ ի ձեր եկեղեցիսդ արատ գտեալ ճարակեսցի, լաւ համարեցաք ազգել առ ձեզ զհասարակաց աւգուտն խորհելով». Խօսքը նեստորականութեան մասին է: Թղթի վերջում պարզում է Ակակին իր քայլի խսկական շարժառութը:

«Բայց մեզ երկիւլ է թէ գուցէ ի թէուդորեալ Մամուեստեալ որմաննէն աշակերտեալ ոք գոցի եւ ի շար ժանգէն զեստորի ի միամիտ պատիւ աղդիցէ: Զի զնորա մնացեալ գրեանն իրեւ ինդիրս այս յայտնեցաւ եւ մանաւանդոր վան մարմախառնին գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհաժողով եպիսկոպոսացն որ յեփեսացոց քաղաքին եղեւ ի մի վայր ժողովել զրնաւ գրեանն եւ այրել: Արդ փորթ լիցի ձեղ առանց պղտորութեան զհաւատսն պահել, զի կատարեալ զարդարութիւնն անապական լնկալչիք»¹:

ՊՐՈՓ. Ն. ԱԴՐԱՆ

Պարիս:
(Տարուհակելի):



¹ Յովհաննես Անտիոքացին Պրոկլին գրած նամակում անուանում է սարկաւագին թէուդուսիոս (diacono Theo- desio) P. G. 65, col. 877: